Աշխատանքի ծածկագիր 5044

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 25.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Գ.Հարությունյանի
մասնակցությամբ անդամներ՝
Տ.Մարկոսյանի
Լ.Գրիգորյանի

Քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 7-րդ, 11-րդ, 17-րդ և 20-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 7

Հավակնորդի կողմից տրված պատասխանելը սխալ է, քանի որ թեստային առաջադրանքում առկա է օրենսդրական կարգավորման իմաստը ամբողջությամբ արտահայտող մեկ այլ տարբերակ: Ինչ վերաբերվում է օրենսդրական կարգավորման հետ դրա բառացի չհամընկնելուն, ապա Հանձնաժողովը այդ առումով որևէ իմաստային տարբերություն չի արձանագրում:

Հարց 11

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ դատական տուգանք նշանակելու մասին որոշումը բողոքարկելի է, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածը այդպիսի ակտերը համարում է վերանայման ենթակա:

Հարց 17

Հավակնորդի փաստարկները անհիմն են, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը ուղղակիորեն սահմանում է քննարկվող խնդրի պատասխանը:

Հարց 20

Ընտրված պատասխանը ճիշտ չէ, քանի որ դրանում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 350-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսված «եթե այդպիսի լիազորություն նախատեսված է օրենքով կամ միջազգային պայմանագրերով» ձևակերպումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 5044 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը ամբողջությամբ մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Տ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ